

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5**

2013թ. մարտի 30-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտ-
խորհրդի նիստը: Նիստին գիտխորհրդի 35 անդամներից մասնակցում էին 28-ը:

Օրակարգ`

1.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2012-2013 ուստարվա 1-ին կիսամյակի գործու-
նեության հաշվետվությունը:

/զեկ` ԲՖ դեկան Վ. Կատվալյան /

2.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի 2012-2013 ուստարվա 1-ին
կիսամյակի հաշվետվությունը:

/զեկ` ամբիոնի վարիչ Վ.Համբարձումյան /

3.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի ընդհանուր գրականության ամբիոնի 2012-2013
ուստարվա 1-ին կիսամյակի հաշվետվությունը:

/զեկ` ամբիոնի վարիչ Վ.Գրիգորյան /

4.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի ամբիոնի 2012-2013 ուստարվա
1-ին կիսամյակի հաշվետվությունը:

/զեկ` ամբիոնի վարիչ Ա. Մուխսիխաչոյան /

5.Ընթացիկ հարցեր:

Նիստը բացեց ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը: Նա նշեց, որ արդեն մի քանի դպրոցների
հետ կնքվել են համագործակցության հուշագրեր, և այդ գործընթացը դեռ
շարունակվում է: Այնուհետև գիտխորհրդի անդամների տեղեկացրեց, որ հուշագիր է
կնքվելու Ծաղկունքի բաց-դպրոց հիմնադրամի հետ, և ներկայացրեց այդ դպրոցի
տնօրեն տեր Նշան Սարգսյանին: Վերջինս որոշ տեղեկություններ տվեց իր
ղեկավարած դպրոցի մասին` հատկապես նշելով, որ այն նպատակ ունի բավարարելու
համայնքի հոգևոր-լուսավորչական կարիքները: Այնուհետև ներկայացվեց և կնքվեց
համագործակցության հուշագիրը:

Բանասիրական ֆակուլտետի 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվությունը
ներկայացրեց ֆակուլտետի դեկան Վ. Կատվալյանը: Նա համակողմանիորեն

ներկայացրեց կատարված աշխատանքները՝ ուշադրություն դարձնելով ուսանողների շարժի, առաջադիմության, կազմակերպված տարաբնույթ միջոցառումների և այլ հարցերի վրա: Ջեկուցողը հատկապես կարևորեց մաքուր գրական հայերենով համատարած կերպով հաղորդակցվելու անհրաժեշտությունը և առաջարկեց այդ ուղղությամբ ակտիվացնել ամբիոնների աշխատանքները, մտցնել նոր առարկա, որը կնպաստի գործնականորեն տիրապետելու գրական հայերենին:

Հայոց լեզվի ամբիոնի վարիչ Վ.Համբարձումյանը, խոսելով ուսումնական ծրագրերի թարմացման և կատարման ընթացքի, կատարելիք աշխատանքների մասին, առավել ուշադրություն դարձրեց գրավոր և բանավոր խոսքի զարգացման հարցերին՝ առաջարկելով ավելացնել գործնական աշխատանքներին տրվող ժամերը, ուսանողներին հանձնարարել ռեֆերատներ ու վերաշարադրանքներ գրել և այլն: Վ.Համբարձումյանը կարևորեց նաև ասպիրանտուրայի հնարավորությունը:

Ընդհանուր գրականության ամբիոնի վարիչ Վ. Գրիգորյանը ևս անդրադարձավ կատարված աշխատանքներին, կարևորեց գրքեր հրատարակելու համար միջոցներ հայթայթելու և հնացած համակարգչային տեխնիկան փոխելու հարցերը:

ԲՖ ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի գործունեության հաշվետվությամբ հանդես եկավ ամբիոնի վարիչ Ա.Մուխսիխաչոյանը: Նա ասաց, որ աշխատանքներն ընթանում են մշակված աշխատանքային պլանի համաձայն, դասախոսությունները ներկայացվում են թարմացված ծրագրերով: Ջեկուցողն արեց նաև մի քանի առաջարկություններ, ինչպես՝ վերանայել մանկավարժական պրակտիկայի բնույթը, պրակտիկան անցկացնել բազային դպրոցում, բացել լեզուների կենտրոն:

Ելույթ ունեցավ ռեկտոր Ռ. Հակոբյանը: Նա ասաց, որ մյուս ֆակուլտետներում ռուսերենի դրվածքը վատ է: Պետք է ընդգրկել ռուսերեն իմացող մասնագետներ: Քանի որ գիտական գրականությունը մեծ մասամբ ռուսերեն է, ուստի այն յուրացնելու համար անհրաժեշտ է խոսել և գրել ռուսերեն:

Ն.Կուտուբյանը ներկայացրեց ինֆորմացիա գիտական հոդվածների 15-րդ ժողովածուի նյութերի հավաքման ընթացքի մասին:

Հիմք ընդունելով զեկուցումներն ու ելույթները՝

Որոշեցին՝

1.ԲՖ դեկան Վ.Կատվայանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2.Հայոց լեզվի ամբիոնի վարիչ Վ. Համբարձումյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

3.Ընդհանուր գրականության ամբիոնի վարիչ Վ.Գրիգորյանի հաշվետվությունն ընդունելի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

4.Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Ա.Մուխախիսաչյանի հաշվետվությունն ընդունելի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

5.Հրատարակման ներկայացնել ԳՊՀ գիտական հոդվածների 15-րդ ժողովածուն:

Գիտխորհրդի նախագահ՝

Ռ. Խ. Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ. Ա. Ասոյան